Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի վերանորոգում և համակարգիչների ձեռքբերում», «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօդիկ մսուր-մանկապարտեզի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի կենցաղային կոյուղու և Քարդաշի ջրաղբյուրի կապտաժների վերակառուցման նախագծում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Անդրեյ Սախարովի անվան թիվ 8 ավագ դպրոցի դահլիճի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հուշապատի կառուցում» ծրագիրը.

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Զեյթուն-154», որի նպատակն է Երևանի թիվ 154 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի 132 սաների և 21 աշխատակիցների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում՝ սննդի, հագուստի, խաղալիքների, հիգիենիկ և այլ պարագաների տրամադրումը և «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրերը.

ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետափ գյուղի դպրոցի վերանորոգում և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օրգով գյուղի դպրոցի պատուհանների վերափոխում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: